ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

14 սեպտեմբերի շաբաթ 2024
տպագրության ԺԳ տարի

123
(2973)

100 դրամ

քաղ. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ՎԻԶԱՆԵՐԻ ԱԶԱՏԱԿԱՆԱՑՈՒՄԸ ԴԵՌ ԹՂԹԻ ՎՐԱ Է

Սեպտեմբերի 9-ին Կառավարությունը հայտարարություն տարածեց, որը փոթորկեց տեղեկատվական դաշտը, հույսով լցրեց ճամփորդողների սրտերը: Բանն այն է, որ Հայաստանի Հանրապետության եւ Եվրոպական հանձնաժողովի կողմից հայտարարվեց մուտքի արտոնագրերի ռեժիմի ազատականացման շուրջ երկխոսության մեկնարկը: Համաձայն կառավարության պաշտոնական հրապարակման՝ այս գործընթացի նպատակն է աջակցել Հայաստանին՝ սահմանելու առանց մուտքի արտոնագրերի ռեժիմ դեպի ԵՄ երկրներ կարճաժամկետ այցերի համար՝ արդյունավետ կառավարվող շարժունակության եւ անվտանգության անհրաժեշտ պայմանների ապահովմամբ: Հայտարարությունից հետո շատերը կարծեցին, որ Եվրոպայի դռները մեկընդմիշտ բացվեցին հայերի համար, այլեւս շենգենյան կամ մուլտիվիզայի անհրաժեշտություն չի լինի: Սակայն եկեք չշտապենք, քանի դեռ ոչ մի շոշափելի արդյունք չունենք:

ՀՀ ՆԳՆ անձնագրային բաժանմունքներում վիզաների համար հերթեր կանգնած քաղաքացիներին աշխատակիցները սթափեցրել եւ հիասթափեցրել են՝ ասելով, որ ոչինչ էլ չկա ու չի լինի, այլեւս իրենց չանհանգստացնեն: Իսկ անձնագրայիններում քաղաքացիները փորձում են անձնագրերը փոխել եվրոպական երկրներ մուտք գործելու համար: Փորձը ցույց է տվել, որ ներկայիս իշխանությունների խոսքը գործ դառնալուց հեռու է գրեթե 1 լուսնային տարի. շատ հաճախ նաեւ գործ չի էլ դառնում, եւ թղթի վրա մնում են զուր խոստումներ:

ՔՊ-ականները շարունակում են արհամարհել պետական արարողակարգի անգամ տարրական պահանջները, ինչն էլ, ցավոք, խիստ բացասական ազդեցություն է ունենում Հայաստանի արտաքին վարկանիշի վրա: Այսպիսով, ՔՊ խմբակցության արդեն նախկին պատգամավոր Գուրգեն Արսենյանը, ով այս տարվա օգոստոսին նշանակվեց ՌԴ-ում Հայաստանի դեսպան, սեպտեմբերի 11-ին հավատարմագրերի պատճենն է հանձնել Ռուսաստանի փոխարտգործնախարար Միխայիլ Գալուզինին, ինչը պաշտոնապես ազդարարում է լիազորությունների ստանձնումը: Մինչդեռ պետական արարողակարգի համաձայն՝ դեսպանի պաշտոն ստանձնելիս սովորաբար հավատարմագրերի պատճենը պաշտոնյան հանձնում է այն պետության ղեկավարին, որտեղ իրացնելու է պարտականությունները: Այդպես էր նաեւ, օրինակ, երբ 2022 թվականին ՌԴ-ում ՀՀ նախկին դեսպան Վաղարշակ Հարությունյանն իր լիազորությունները ստանձնելիս հավատարմագրերի պատճենը հանձնեց ՌԴ նախագահ Վլադիմիր Պուտինին. սակայն Արսենյանին Պուտինը չի ընդունել: ՔՊ-ականները որոշել են արտաքին աշխարհի «կարծրատիպերը» կոտրել ու չպահպանել պետական արարողակարգի կանոնները: «Ժողովուրդ» օրաթերթը ԱԳՆ-ի տարածած հաղորդագրությունից նկատեց, որ Գուրգեն Արսենյանը դեսպանի պաշտոն ստանձնելիս, չգիտես ինչու, հավատարմագրերի պատճենը հանձնել է ոչ թե ՌԴ նախագահին, այլ Ռուսաստանի փոխարտգործնախարար Միխայիլ Գալուզինին, ինչը ՀՀ պատմության մեջ գրեթե աննախադեպ երեւույթ է, եթե ոչ՝ խայտառակություն:

Թվում է թե, արդեն ականատես ենք եղել ամեն բանի, բայց ՔՊ-ի իշխանության օրոք նրանք չեն դադարում օրեցօր զարմացնել՝ ամեն ինչ մոռացության տալու իրենց անհագ ցանկությամբ: Երեկ՝ սեպտեմբերի 13-ին, լրացավ Հայաստանի նկատմամբ Ադրբեջանի կողմից սանձազերծված ռազմական ագրեսիայի երկրորդ տարին: 2022 թվականին՝ այս օրը, Ադրբեջանի ԶՈՒ ստորաբաժանումները հրետանային միջոցներից, խոշոր տրամաչափի հրաձգային զինատեսակներից սկսեցին ինտենսիվ կրակ արձակել Գորիսի, Կապանի, Սոթքի, Ջերմուկի, Արտանիշի եւ Իշխանասարի հայկական դիրքերի եւ բնակավայրերի ուղղությամբ: Ադրբեջանական կողմը երկօրյա մարտերի ընթացքում հաջողեց, անգամ որոշ ուղղություններով էլ ձեռնարկեց դիրքային առաջխաղացման գործողություններ: Հակառակորդը ռազմական ագրեսիայի արդյունքում դիրքային առաջխաղացում ունեցավ Ներքին Հանդի, Վերին Շորժայի, Արտանիշի եւ Սոթքի ուղղությամբ: Մինչ օրս Հայաստանի ինքնիշխան տարածքները մնում են օկուպացված, իսկ Ադրբեջանի հետ խաղաղության գնալու անհագ ցանկությամբ տոգորված հայրենի իշխանություններին այդպես էլ չի հաջողվում Հայաստանի ինքնիշխան տարածքից հեռացնել հակառակորդի զորքերը: Ավելին՝ Հայաստանի իշխանությունները մինչ օրս չեն հրապարակել ռազմական գործողությունների հետեւանքով զոհվածների ցուցակը: Պաշտոնական տվյալներով՝ մարտերի ընթացքում հայկական կողմը տվել է 224 զոհ: Երեկ՝ սեպտեմբերյան երկօրյա մարտերի զոհերի հիշատակի օրը, որեւէ պաշտոնյա չի այցելել եռաբլուր՝ հարգանքի տուրք մատուցելու. համենայնդեպս ոչ մի պետական կառույց այդ մասին հաղորդագրություն չի տարածել, ինչպես սովորաբար լինում է: Նիկոլ Փաշինյանն անգամ հարկ չի համարել օրվա կապակցությամբ հիշատակի խոսք ուղղել հանրությանը, որին «սիրում եւ որով հպարտանում էր», ընդհուպ՝ «խոնարհվում»:



«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկությունների համաձայն՝ 36 կգ ոսկու, 293 միլիոն ՌԴ ռուբլու անհետացման գործով նախաքննության ավարտ է հայտարարվել 7մեղադրյալների մասով, եւ աղմկահարույց գործը ուղարկվում է դատարան: Սակայն ուշագրավն այն է, որ աղմկահարույց դեպքից անցել է գրեթե 6 ամիս, բայց հիմնական դերակատարները չկան, իսկ կալանավորվածը՝ մեկ կարեւոր խմբի մասնակիցը, ցուցմունք չի տալիս, գողոնի մեծ մասն էլ չկա ու չկա: Եվ, մինչ իրավապահները 6 ամիս է նրանց են փնտրում, ու գործը դատարան ուղարկում, ենթադրյալ հանցագործները վայելում են ձեռք բերածը: «Ժողովուրդ» օրաթերթը գրել էր, որ այս գործով իրավապահների տեսադաշտում է հայտնվել մի դատավոր. մասնավորապես, քրեական գործի շրջանակում ՀՀ քննչական կոմիտեն վկայի կարգավիճակում հարցաքննել է Երեւան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Արշակ Պետրոսյանին: Հիշեցնենք, որ ՀՀ քննչական կոմիտեն պաշտոնապես հայտնել էր, որ ապրիլի 10-ին «Պորշ» մակնիշի ավտոմեքենայով հետապնդել են «Հունդայի Սոնատա» մակնիշի ավտոմեքենային, եւ ժամը 07:15-ից մինչեւ 07:20-ն ընկած ժամանակահատվածում Արմավիրի մարզի Փարաքար համայնքի Մայրաքաղաքային փողոցի դիմաց արհեստական խոչընդոտ ստեղծելով՝ մեքենայի դիմացի աջ դռան պատուհանից, զենքի գործադրման սպառնալիքով, կանգնեցրել են նշված ավտոմեքենան: Կանգնեցնելուց հետո՝ ենթադրյալ հանցագործությունը կատարած անձինք, ԱԱԾ աշխատակիցների համազգեստին նմանվող համազգեստով եւ դիմակավորված, դուրս գալով ավտոմեքենայից՝ ներկայացել են իբրեւ ՀՀ ԱԱԾ աշխատակիցներ եւ ավտոմեքենայում գտնվող 3 անձի նկատմամբ զենքի կիրառումով բռնություն գործադրելով՝ նրանց դուրս են բերել ավտոմեքենայից: Այնուհետեւ, թմրամիջոց ու այլ արգելված իրեր փնտրելու եւ նրանց ձերբակալելու պատրվակով՝ վերոնշյալ երեք անձանց ձեռքերին անցկացրել են ձեռնաշղթաներ, ապա ավտոմեքենայից հափշտակելով առանձնապես խոշոր չափի՝ 36 կգ քաշով 999 հարգի ոսկյա ձուլակտորները եւ 293.000.000 ՌԴ ռուբլի գումարի պարունակությամբ պայուսակները, հիշյալ անձանց նկատմամբ բռնություն գործադրելով՝ նստեցրել են նույն ավտոմեքենան, դիմացի դռնից արցունքաբեր գազ փչելով ավտոմեքենայի մեջ՝ «Պորշ» մակնիշի ավտոմեքենայով դիմել են փախուստի: ***Շարունակությունը՝ ArmLur.am կայքում:***

ԶՐՈՒՅՑ

ՀԱՄԱՁԱՅՆ Է ԴԱՏԱՐԱՆԻ ՎՃՌԻՆ

Սեպտեմբերի 10-ին Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Վարսենիկ Մելքոնյանի որոշմամբ՝ Գորիս համայնքի ղեկավար Առուշ Առուշանյանը դատապարտվեց 1 տարի 8 ամիս 3 օր ժամկետով ազատազրկման:

Առուշ Առուշանյանի պատիժներից մեկն էլ 5 տարով համայնքային պաշտոն զբաղեցնելու սահմանափակումն է:

Երեկ մամուլում տեղեկություն հրապարակվեց, որ Գորիսի համայնքապետի պաշտոնի համար արդեն իսկ պայքար է սկսվել, իսկ հիմնական հավակնորդն այդ պաշտոնի ՔՊ խմբակցության պատգամավոր Արմեն Խաչատրյանն է:

ArmLur.am-ն այդ առնչությամբ զրուցել է Առուշ Առուշանյանի հետ:

-Պարոն Առուշանյան, ստացվում է՝ դատարանի վճռի ուժի մեջ մտնելուց հետո՝ Ձեր լիազորությունները դադարելու են եւ 5 տարի չեք կարողանալու այլեւս այդ պաշտոնը զբաղեցնել: Ի՞նչ եք պատրաստվում անել:

-Դատարանը որոշում է կայացրել, ի՞նչ պետք է անեմ. կնստեմ, կգամ:

-Չե՞ք վիճարկելու դատարանի վճիռը:

-Փաստաբաններն են այդ հարցով զբաղվում, ես չեմ կարող ասել:

-Պարոն Առուշանյան, իսկ վճռի մասին ի՞նչ կասեք, արդարացի համարո՞ւմ եք:

-Հարցազրույց տվել եմ այդ մասին, խոսել եմ, ասելու նոր բան չկա: Չեմ ուզում էլ խոսել:

-Պարոն Առուշանյան, բայց, ըստ մամուլում հրապարակված տեղեկությունների, Ձեր պաշտոնի համար արդեն իսկ պայքար է սկսվել՝ մասնավորապես խոսքն իշխանական պատգամավոր Արմեն Խաչատրյանի մասին է:

-Ընդունելի համարեք այն, ինչ ասել եմ հարցազրույցին, դրա վերաբերյալ նոր խոսք չունեմ:

Զրուցեց ՔՐԻՍՏԻՆԱ ՄՈՒՇԵՂՅԱՆԸ

ԱՐՁԱԳԱՆՔ

«ԵԹԵ ՎՃԻՌ ԼԻՆԻ, ՊԱՏՐԱՍՏ ԵՄ ՎԱՅՐ ԴՆԵԼ ՄԱՆԴԱՏՍ»

2023թ. մարտի 31-ին խորհրդարանում տեղի ունեցած միջադեպի փաստով այսօր Երեւան քաղաքի քրեական դատարանն ԱԺ «Հայաստան» խմբակցության դատգամավոր Միհեր Սահակյանի վերաբերյալ դատավճիռ է կայացրել:

Հիշեցնենք՝ մարտի 31-ին Ազգային ժողովի «Ազգային ժողովի պետահրավական մշտական հանձնաժողովի փակ նիստում վիճաբանության ընթացքում Միհեր Սահակյանը հարվածել էր ՔՊ-ական պատգամավոր Վլադիմիր Վարդանյանին:

Այսօր իրավապաշտպան Ռուբեն Մելիքյանը հայտնել էր, որ Միհեր Սահակյանը իրեն առաջադրված խուլիգանության մեղադրանքով (ՔՕ 297 հոդվածի 1-ին մաս) արդարացվել է:

Դատարանը վճռել է նաեւ ծանրացնող հանգամանքով առողջությանը թեթեւ վնաս պատճառելու հոդվածը (ՔՕ 171 հոդվածի 2-րդ մաս՝առողջությանը թեթեւ վնաս պատճառելը) վերաորակել առանց ծանրացնող հանգամանքի՝ թեթեւ վնաս պատճառելու հոդվածի (նույն հոդվածի 1-ին մաս), եւ դրանում Սահակյանին ճանաչել մեղավոր:

ArmLur.am-ի հետ զրույցում պատգամավոր Միհեր Սահակյանը, անդրադառնալով դատարանի կայացրած վճռին, նշում է. «Մեղադրանքի մասով դատարանը փոխել է հոդվածը, Դատախազությունը ծանրացնող հանգամանքներ էր ներկայացրել, ինչը դատարանը փոխել է»,-ասաց նա:

Հարցին՝ պատրաստվո՞ւմ է վիճարկել դատարանի վճիռը, պատգամավորն ասում է՝ «Դեռ չեմ որոշել, այն ակնկալիքը, որը ես ունեի՝ խուլիգանության մասով, արդարացվեցի, դա էր ամենակարեւորը, իսկ անհրաժեշտ պաշտպանությունը նուրբ հոդված է, տեսնենք՝ ինչ կլինի:

Նշենք, որ Ազգային ժողովի կանոնակարգի համաձայն՝ պատգամավորի նկատմամբ կայացված մեղադրական վերջնական դատավճիռն օրինական ուժի մեջ մտնելու դեպքում՝ նրա լիազորությունները դադարում են:

Պատգամավորից հետաքրքրվեցինք՝ ի՞նչ է պատրաստվում անել, արդյոք դատարանի վճիռն ուժի մեջ մտնելու դեպքում պատրա՞ստ է վայր դնել մանդատը.

«Դեռ չգիտեմ, չեմ ուսումնասիրել, բայց ոչ մի խնդիր չեմ տեսնում, պատրաստ եմ դրան»,-ասաց Միհեր Սահակյանը:

ՔՐԻՍՏԻՆԱ ՄՈՒՇԵՂՅԱՆ

ԼՈՒԿԱՇԵՆԿՈՅԻ ԵՎ ՓԱՇԻՆՅԱՆԻ «ՍԱՌԸ» ՊԱՏԵՐԱԶՄԸ

Տեւական ժամանակ է, ինչ Բելառուսի նախագահ Ալեքսանդր Լուկաշենկոն տարբեր դիրքորոշումներ է հայտնում հայ ժողովրդի մասին, քննադատում Հայաստանի իշխանությանը:

Դեռ մեկ ամիս առաջ էր, երբ Լուկաշենկո-Փաշինյան հեռակա «սառը» պատերազմը նոր թափ հավաքեց, քանի որ Լուկաշենկոն հայերի մասին, մեղմ ասած, լավ չէր արտահայտվել, ասելով՝ թե հայերը ոչ ոքի պետք չեն, բացի իրենցից, եւ որ ավելի լավ է՝ հայերը կենտրոնական ունեցածի վրա՝ զարգացնելով տնտեսությունը:

Հիշեցնենք, որ հունիս ամսին հայ-բելառուսական հարաբերությունները կրկին բավականին սրված էին, քանի որ Երեւանը Բելառուսից հետ էր կանչել իր դեսպանին, ինչին հետեւել էր Մինսկի հայելային պատասխանը, իսկ ՀՀ վարչապետ Փաշինյանն էլ մինչ այդ խորհրդարանում հայտարարել էր, թե Բելառուս չի գնա, քանի դեռ նախագահ է Ալեքսանդր Լուկաշենկոն: Այս ամենի ամբողջ պատճառն այն էր, որ մայիսի 16-ին Բաքվում Բելառուսի նախագահը հայտարարել էր, որ 44-օրյա պատերազմի ժամանակ Մինսկը ցանկանում էր Ադրբեջանի հաղթանակն ու «իր տարածքային ամբողջականության վերականգնումը»:

Հարկ է նշել, որ այս բոլոր հայտարարություններից հետո Լուկաշենկոն երեկ Հայաստանին կոչ է արել չկորցնել ավանդական գործընկերների հետ բարեկամությունը, քանի որ ամեն ինչ էլ պատահում է: Լուկաշենկոյի խոսքվ՝Հայաստանին ուրիշ ոչ մի տեղ չեն սպասում, քանի որ ամեն մեկը զբաղված է իր հարցերով:

Չնայած վերը նշված հայտարարություններին՝ Լուկաշենկոն ցանկանում է վերականգնել Հայաստանի հետ բարիդրացիական հարաբերությունները, որոնք հաստատվել էին նախորդ տարիներին: Այս անգամ Լուկաշենկոն հայերի մասին ասել է, որ հայերը շատ խելացի մարդիկ են ու շուտով կհասկանան, թե որտեղ է իրենց երջանկությունը:

Լուկաշենկոն նաեւ ասել է, որ իրենք ամեն կերպ փորձել են օգնել հայերին, համագործակցել են ինչպես ամենամոտ մարդկանց հետ, ամեն կերպ օգնել են, սակայն հայերը ուզում են գնալ Արեւմուտք, ԵՄ:

Վերջում հավելենք, որ այս ամենի ֆոնին, այնուամենայնիվ Բելառուսի նախագահը չի դադարել քննադատել ՀՀ ղեկավարությանը եւ ասել է, որ Լեռնային Ղարաբաղում վերջին տարիներին տեղի ունեցած իրադարձությունների մեղքը կրում է Հայաստանի ղեկավարությունը, եւ որ ինքը զգուշացրել է ՀՀ իշխանություններին տալ այդ տարածքները Ադրբեջանին:

ԱՆՆԱ ՍՐԱՊԻՈՆՅԱՆ

ՓԱՇԻՆՅԱՆ–ԲԼԻՆՔԵՆ ՀԵՌԱԽՈՍԱԶՐՈՒՅՑ

Տեղի է ունեցել վարչապետ Նիկոլ Փաշինյանի հեռախոսազրույցը ԱՄՆ պետքարտուղար Էնթոնի Բլինքենի հետ: Այս մասին հայտնում են ՀՀ կառավարությունից:

Քննարկվել են Հայաստան-Ադրբեջան խաղաղության գործընթացին եւ Հայաստան-ԱՄՆ երկկողմ օրակարգին առնչվող հարցեր:

ԲԱՔՎՈՒՄ ՊԱՀՎՈՂ ՀԱՅԵՐԻ ԱԶԱՏ ԱՐՁԱԿՄԱՆ ՀԱՐՑԸ



Միջազգային քրեական դատարանի նախկին գլխավոր դատախազ Լուիս Մորենո Օկամպոյի կարծիքով՝ նոյեմբերին Բաքվում տեղի ունենալիք COP29 գագաթաժողովի ընթացքում ադրբեջանական բանտում գտնվող հայերի ազատ արձակման հարցը պետք է լինի օրակարգում եւ քննարկվող հարցերի մաս կազմի:

Օկամպոն նման կարծիք հայտնեց մամուլի ասուլիսի ընթացքում՝ ուղերձ հղելով COP29 գագաթնաժողովի մասնակիցներին եւ որոշում կայացնողներին:

Նա չափազանց կարեւոր համարեց այն հանգամանքը, որ այդ գագաթնաժողովի ժամանակ մասնակիցների կողմից չարհամարհվի Բաքվում անազատության մեջ գտնվող հայերի խնդիրը՝ միաժամանակ հույս հայտնելով, որ հայ գերիներն ազատ կարձակվեն գագաթնաժողովից առաջ:

Նրա դիտարկմամբ՝ Բաքվում անազատության մեջ գտնվող հայերը գերիներ են, այլ ոչ թե ռազմագերիներ:

«Այն մարդիկ, ովքեր հիմա գտնվում են Բաքվի բանտերում, նրանք պարզապես Արցախի առաջնորդներն էին: Սա տխրեցնող է, սակայն նման է նրան, ինչ տեղի է ունեցել 1915 թվականին, քանի որ այն ժամանակ թուրքերի առաջնային առաքելությունը հայերի առաջնորդների վերացումն էր: Սա նույնն է, ինչ տեղի ունեցավ Լեռնային Ղարաբաղում», - ընդգծեց Օկամպոն՝ վերահաստատելով իր այն միտքը, որ Լեռնային Ղարաբաղի նախկին ռազմաքաղաքական ղեկավարների ազատման հարցը պետք է լինի COP29-ի օրակարգում եւ քննարկումների մաս կազմի:

Օկամպոյի հիմնական ուղերձը հետեւյալն է. «Ազատե՛ք հայ պատանդներին, դադարեցրե՛ք ցեղասպանությունը»:

ԱԳՆ ՍՈՒՏԸ

ՀՀ-Ն ՄԻԱՑԵԼ, ԱՊԱ ՀԵՏ Է ԿԱՆԳՆԵԼ ՊՈՒՏԻՆԻՆ ՁԵՐԲԱԿԱԼԵԼՈՒ ՀՌՉԱԿԱԳՐԻՑ

Հայաստանը լուռ միացել է սեպտեմբերի 5-ին ընդունված՝ Պուտինին դատաժելու, ձերբակալելու հռչակագրին, ապա՝ հետ է կանչել իր ստորագրությունը:

Ինչպես է տեղի ունեցել գործընթացը

Սեպտեմբերի 5-ին Եվրոպայի խորհրդի անդամ երկրների արդարադատության նախարարները հավաքվել են Լիտվայի մայրաքաղաք Վիլնյուսում՝ մասնակցելու «Ուկրաինայում կատարված միջազգային հանցագործությունների համար պատասխանատվության ենթարկելու ուղղությամբ» խորագրով համաժողովի: Այդ ընթացքում հռչակագիր են ընդունել, որով նախատեսվում է ստեղծել միջազգային հատուկ տրիբունալ ՌԴ-ի՝ Ուկրաինայում կատարած հանցագործությունները քննելու համար:

«Մենք վճռականորեն աջակցում ենք Միջազգային քրեական դատարանի հետաքննությանը՝ նպատակ ունենալով պատասխանատվության ենթարկել Ուկրաինայի տարածքում միջազգային հանցագործությունների մեղավորներին: Մենք կոչ ենք անում բոլոր պետություններին աջակցել դատարանին՝ համագործակցելու իր ընթացիկ հետաքննության եւ մեղավորներին պատասխանատվության ենթարկելու հարցում»,-ասված է հռչակագրում:

Մյուս կետով նրանք վերահաստատել են Ուկրաինայի դեմ հանցագործության գործով հատուկ տրիբունալի ստեղծման անհրաժեշտությունը, որն «ի վիճակի կլինի արդարություն իրականացնել՝ պատասխանատվության ենթարկելով ամենամեծ պատասխանատուին»:

Աղմուկից հետո ՀՀ ԱԳՆ-ն հրապարակավ ստեց

Սեպտեմբերի 6-ին, երբ համացանցում հայտնվեցին լուրեր, որ Հայաստանն ու Վրաստանը ստորագրել են Եվրոպայի խորհրդի հռչակագիրը՝ Ռուսաստանի նախագահ Վլադիմիր Պուտինի «ձերբակալման» վերաբերյալ, ՀՀ արտաքին գործերի նախարարությունից հերքեցին, թե Հայաստանը ի սկզբանե հռչակագրի չի միացել:

Սակայն իրականում հռչակագրի սկզբնական տարբերակը կա ինտերնետ տիրույթում. *տես 1-ին եւ 2-րդ լուսանկարներում*

1

PRESIDENCY OF LITHUANIA
Council of Europe
May - November 2024
PRÉSIDENCE DE LA LITUANIE
Conseil de l'Europe
Mai - Novembre 2024
COUNCIL OF EUROPE
CONSEIL DE L'EUROPE

DECLARATION OF THE MINISTERS OF JUSTICE
OF THE COUNCIL OF EUROPE

On the Occasion of the Informal Conference
"Towards Accountability for International Crimes
Committed in Ukraine"

5 September 2024
Vilnius, Lithuania

We, the Ministers of Justice of the Member States of the Council of Europe*, convened in Vilnius, Lithuania, under the auspices of the Lithuanian Presidency of the Committee of Ministers of the Council of Europe, to address critical justice and accountability issues related to Russia's aggression against Ukraine;

Recalling the fundamental principles enshrined in the Statute of the Council of Europe, particularly the protection of human rights, the rule of law, and the commitment to peace through justice and international cooperation, as outlined in the Preamble;

2

11. We emphasise the need for enhanced cooperation among States, international organisations, and civil society to effectively collect and share evidence and other information, in order to prosecute perpetrators of international crimes committed in Ukraine and enforce judgments.

We, the Ministers of Justice, resolve to work collectively to implement the principles outlined in this Declaration and encourage the Council of Europe to continue contributing to consultations within the Core Group on the establishment of a Special Tribunal for the Crime of Aggression, in the context of efforts towards accountability for international crimes committed in and against Ukraine.

* **List of Member and Observer States who have supported this declaration**: Albania, Andorra, Armenia, Austria, Belgium, Bulgaria, Canada, Croatia, Cyprus, Czechia, Denmark, Estonia, Finland, France, Georgia, Germany, Greece, Iceland, Ireland, Italy, Japan, Latvia, Liechtenstein, Lithuania, Luxembourg, Malta, Republic of Moldova, Monaco, Montenegro, Netherlands, North Macedonia, Norway, Poland, Portugal, Romania, San Marino, Slovenia, Spain, Sweden, Switzerland, Ukraine, United Kingdom, United States of America. This declaration was agreed in the presence of Věra Jourová, Vice-President of the European Commission.

Առաջին եւ երկրորդ լուսանկարները հռչակագրի առաջին եւ վերջին էջերն են, որտեղ երեւում է Հայաստանի անունը որպես հռչակագրին միացած երկիր: Բացի այդ, Լիտվայի արդարադատության նախարարությունից Սիվիլնեթին հայտնել են, որ փաստաթղթի հաստատումը մի քանի փուլով է ընթանում: Փաստաթղթի սկզբնական տարբերակն ուղարկվում է անդամ պետություններին, եթե առարկություններ չեն լինում, հռչակագիրը համաձայնեցված է համարվում անդամ պետությունների հետ: Համաժողովի մասնակից դիտորդ պետություններին զգուշացվել է նաեւ, որ ստորագրման պաշտոնական գործընթաց չի լինելու:

«Հայաստանն ի սկզբանե նշված է եղել որպես հռչակագիրը ստորագրած երկիր, քանի որ լուռ ընթացակարգի (լուռ ընթացակարգի փուլում, եթե որեւէ առարկություն չի լինում, ապա փաստաթուղթը համարվում է համաձայնեցված) ընթացքում, համաժողովից առաջ կամ դրա ընթացքում պետության կողմից որեւէ առարկություն չի եղել»,- ասված է Լիտվայի արդարադատության նախարարության պատասխանում:

Այսինքն՝ ի սկզբանե Հայաստանը միացել է այդ հռչակագրին, սակայն համաժողովից հետո Հայաստանից հայտ է ստացվել ստորագրողների ցուցակից երկիրը հեռացնելու վերաբերյալ, ինչի արդյունքում Հայաստանը հեռացվել է ցուցակից:

Այս պահին հռչակագրին միացած անդամ եւ դիտորդ երկրների ցանկը կա, որոնց թվում են, օրինակ, Շվեյցարիան, Կանադան, Մոլդովան, Իտալիան, Բելգիան, Բուլղարիան, Ճապոնիան, Իսպանիան, Սան Մարինոն եւ այլ երկրներ:

Հավելենք նաեւ, որ Հայաստանը շարունակում է 2023-ի հոկտեմբերին ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունված Հռոմի ստատուտով նախատեսված պարտավորությունները:

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ՈՐՈՇՈՒՄԸ ԿԱՍԵՑՎԱԾ Է

ArmLur.am-ը ՀՀ Դատական դեպարտամենտից տեղեկացավ, որ Հանրային ռադիոյի տնօրենի մրցույթի այս տարվա հուլիսի 29-ի մրցույթի N 52-Ա որոշումը հայցվոր Լուսինե Պետրոսյանի պահանջով կասեցված է, ինչը նշանակում է, որ պետք է նոր մրցույթ անցկացվի առաջիկայում:

Սույն օրվանից օրենքի ուժով կասեցված է ՀՀԽ-ի՝ Ռադիոյի տնօրենի մրցույթի արդյունքներն ամփոփելու եւ Արմեն Քոլոյանին հաղթող ճանաչելու մասին 29.07.2024թ. N 52-Ա որոշման գործողությունը: «Հրապարակ»-ը գրել է, որ «Պրն. Քոլոյանին Ռադիոյի տնօրենի թափուր պաշտոնի համալրման համար մրցույթի հաղթող ճանաչելու որոշման գործողությունն օրենքի ուժով կասեցված է, ինչը պրն Քոլոյանին դարձնում է ժամանակավոր պաշտոնակատար, քանի որ նրան մրցույթի հաղթող ճանաչած որոշումն այլեւս չի գործում, գոնե մինչեւ գործն ըստ էության լուծող դատական ակտի կայացումը եւ ուժի մեջ մտնելը»:

Հիշեցնենք, որ դեռ անցյալ շաբաթ հաղորդվել էր՝ Հանրային ռադիոյի տնօրենի թափուր պաշտոնի համալրման համար հուլիսին անցկացված մրցույթի արդյունքներն անվավեր ճանաչելու պահանջով հայցադիմումը՝ Լուսինե Պետրոսյանն ընդդեմ Հանրային հեռարձակողի խորհրդի գործով, ընդունվել է Վարչական դատարանի վարույթ:

Հայցադիմումով վիճարկված ՀՀԽ երկու որոշումներից մեկի գործողությունը 26.08.2024-ից կասեցված է, մյուսինը՝ ոչ: Այսինքն՝ Քոլոյանը պետք է դառնա տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար՝ մինչեւ վերջնական դատական ակտի կայացումը:

ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ԱՆՁԵՌՄԽԵԼԻՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի փոխարտգործնախարար Վահան Կոստանյանը հեռախոսազրույց է ունեցել Իրանի արտաքին գործերի նորանշանակ փոխնախարար Մաջիդ Թախտ Ռավանչիի հետ:

«Ես արտահայտել եմ մեր սկզբունքային դիրքորոշումը միջազգային սահմանների անձեռնմխելիության վերաբերյալ», - X-ի իր միկրոբլոգում գրել է Ռավանչին՝ ընդգծելով, որ ընդունել է Երեւան այցելելու Կոստանյանի հրավերը:

ՄԱՆՐԱՄԱՍՆԵՐ

ՄԵԿ ՈՍՏԻԿԱՆԻ ԿՅԱՆՔԻՑ ՁՐԿԵԼ Է, 4-ԻՆ՝ ՎԻՐԱՎՈՐԵԼ

ՀՀ քննչական կոմիտեի Արմավիրի մարզային քննչական վարչությունում շարունակվում է մեկ ոստիկանի սպանության, եւս չորսի նկատմամբ սպանության փորձ կատարելու դեպքի առթիվ նախաձեռնված քրեական վարույթի նախաքննությունը:

Ինչպես արդեն տեղեկացրել ենք, 2024թ. սեպտեմբերի 7-ին օպերատիվ տվյալներ էին ստացվել այն մասին, որ Արմավիրի մարզի Նալբանդյան բնակավայրի 41-ամյա բնակիչը եղբոր անվամբ հաշվառված «VAZ 210740 I» մակնիշի ավտոմեքենայում ապօրինի հրազեն է պահում: Նշված տեղեկատվությունն իրացնելու նպատակով ՀՀ ՆԳՆ ոստիկանության Արմավիրի մարզային վարչության ծառայողներից բաղկացած խումբը մեկնել էր Նալբանդյան բնակավայր:

Քննությամբ ձեռք բերված փաստական տվյալների համաձայն՝ Ոստիկանության ծառայողների խումբը Նալբանդյան բնակավայրից դեպի Նոր Արտագերս տանող ճանապարհին նկատել է հիշյալ տղամարդուն՝ «ՎԱԶ 2107» մակնիշի ավտոմեքենան վարելիս: Ոստիկանության ծառայողները կանգնեցրել են նրան եւ ձերբակալելու նպատակով մոտեցել վերջինիս:

Նկատելով ոստիկաններին, գիտակցելով իր կողմից ապօրինի ձեռք բերված՝ այդ պահին հիշյալ ավտոմեքենայում պահվող հրազենը վերջիններիս կողմից հայտնաբերելու իրական հնարավորությունը, ինչպես նաեւ իրեն ձերբակալելու մտավախությունից դրդված՝ նշված անձը, ոստիկաններին ապօրինաբար կյանքից զրկելու դիտավորությամբ, այլ անձանց համար վտանգավոր եղանակով, իր մոտ գտնվող «AK-74» մոդելի ինքնաձիգից ավտոմեքենայի սրահից, ինչպես նաեւ իջնելուց հետո կրակոցներ է արձակել ոստիկանության վերը նշված աշխատակիցների ուղղությամբ եւ դիմել փախուստի:

Կրակոցների հետեւանքով ոստիկաններից մեկին պատճառվել են կյանքի հետ անհամատեղելի մարմնական վնասվածքներ, եւս մեկ ոստիկան ստացել է ծանր մարմնական վնասվածքներ:

41-ամյա տղամարդը, իր կամքից անկախ հանգամանքներով պայմանավորված, իր հանցավոր մտադրությունն ամբողջովին ավարտին չի հասցրել, քանի որ հրազենային վիրավորում ստացած հիշյալ ոստիկանի կյանքը հնարավոր է եղել փրկել ժամանակին ցուցաբերված բժշկական օգնության շնորհիվ, իսկ ոստիկանության մյուս աշխատակիցներին հաջողվել է թաքնվել եւ խույս տալ իրենց ուղղությամբ արձակված կրակոցներից:

Վերը նշված ենթադրյալ հանցագործությունները կատարելուց հետո 41-ամյա տղամարդն իր կողմից ապօրինի ձեռք բերված եւ պահվող հիշյալ «AK-74» մոդելի ինքնաձիգը եւ դրա համար նախատեսված 10 հատ 5.45 մմ տրամաչափի փամփուշտ պահել է նույն բնակավայրում գտնվող անասնագոմի տարածքում, որոնք սեպտեմբերի 8-ին անասնագոմի սեփականատիրոջ կողմից ներկայացվել են քննչական բաժին:

Ձեռք բերված բավարար փաստերի հիման վրա Նալբանդյան բնակավայրի 41-ամյա բնակչի նկատմամբ հարուցվել է հանրային քրեական հետապնդում, եւ նրան մեղադրանք է ներկայացվել՝ ՀՀ քրեական օրենսգրքի 155-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին եւ 7-րդ կետերով, 44-155-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին եւ 7-րդ կետերով (4 դրվագ), 452-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետով (2 դրվագ), 44-452-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետով (3 դրվագ) եւ 335-րդ հոդվածի 1-ին մասով: Նրա նկատմամբ որպես խափանման միջոց է կիրառվել կալանքը:

Ք.Մ.

ՔՐԵԱԿԱՆ ՔՐՈՆԻԿՈՆ

ԱՊՕՐԻՆՈՒԹՅՈՒՆ

Գլխավոր դատախազությունը պահանջում է Գյումրու նախկին քաղաքապետ Վարդան Ղուկասյանից եւ նրա հարազատներից բռնագանձել 17 անշարժ գույք, մեկ ավտոմեքենա, մոտ 4,5 միլիոն դրամ՝ որպես ապօրինի եկամտի մնացորդ, 218 մլն 335 հազար դրամ էլ՝ որպես ապօրինի եկամուտ: Հակակոռուպցիոն դատարանը Դատախազության այս հայցադիմումն ընդունել է վարույթ:

Այսպես, Գյումրու նախկին քաղաքապետ Վարդան Ղուկասյանից եւ նրան փոխկապակցված անձանցից պահանջվում է բռնագանձել «17 անշարժ գույք, 1 տրանսպորտային միջոց, 2 իրավաբանական անձանցում մասնակցություն, 4 մլն 496 հազար դրամ՝ որպես ապօրինի եկամտի մնացորդ, 218 մլն 335 հազար դրամ, որը չի հիմնավորվում անձի օրինական եկամուտներով, ունի ապօրինի ծագում, փոխանցվել է բարեխիղճ ձեռքբերողի կամ հնարավոր չէ նույնականացնել եւ բռնագանձել»:

Սրան զուգահեռ Գյումրու ավագանու «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցությունը 2003-ից մինչեւ 2018-ը՝ նախկին քաղաքապետերի՝ Վարդան Ղուկասյանի ու Սամվել Բալասանյանի պաշտոնավարման տարիներին օտարված 24 անուն գույքը համայնքին վերադարձնելու պահանջով վարչական դատարան է դիմել:

ArmLur.am-ը երեկ Հակակոռուպցիոն դատարանում Վարդան Ղուկասյանից հետաքրքրվեց, թե Դատախազության հրապարակած 17 ապօրինի անշարժ գույքերը որոնք են, եւ ինչ միջոցներով են ձեռք բերվել, որ Դատախազությունը չի հավատում եւ ապօրինի է համարում:

ՆՈՐ ՄԵՂԱԴՐՅԱԼՆԵՐ

Սիսիանում զինվորին նվաստացնելու, ճնշելու դեպքից հետո զորամասում ուշագրավ բացահայտումներ են եղել ու առաջիկայում այս գործով այլ մեղադրյալներ են սպասվում:

Սեպտեմբերի 2-ին՝ ժամը 10:10-ի սահմաններում, ՀՀ ՊՆ N զորամասի պահպանության գոտու մարտական դիրքում հայտնաբերվել էր զինծառայող Էդգար Ալեքսանյանի դին՝ կզակի շրջանում հրազենային վնասվածքով:

ArmLur.am-ն ավելի վաղ գրել էր. «Քննչական կոմիտեն հայտնեց, որ ՀՀ ՊՆ N զորամասի պարտադիր ժամկետային զինծառայող Հ. Ե.-ն, տվյալ մարտական դիրքում որպես դիտորդ ընդգրկված լինելով մարտական հերթապահության, 2024թ. օգոստոսի 27-ից մինչեւ սեպտեմբերի 2-ն ընկած ժամանակահատվածում տարբեր օրերի անձնակազմի ներկայությամբ պարբերաբար նվաստացրել է նույն մարտական դիրքում որպես դիտորդ ծառայության ընդգրկված զինծառայող Է. Ալեքսանյանի անձնական պատիվն ու արժանապատվությունը, հնչեցրել հայհոյանքներ, հարվածել:

Է. Ալեքսանյանը, հայտնվելով անելանելի վիճակում, 2024 թ.-ի սեպտեմբերի 2-ին՝ ժամը 09:45-ի սահմաններում, նույն մարտական դիրքում դիտորդի պարտականությունները կատարելու ընթացքում «ԱԿՄ» տեսակի ինքնաձիգով մեկ կրակոց է արձակել կզակի շրջանում եւ ինքնասպան եղել:

Իսկ թե ինչի համար է նվաստացրել, նախաքննական մարմնիը չի նշել, սակայն ArmLur.am-ին հասած տեղեկությունների համաձայն, դիրքում քնելու թեման ու հեռախոսով խոսելու հարցը դարձել է պատճառ, որ ժամկետային զինծառայողին հասցրել են ինքնասպանության»:

Այս գործով կա մեկ կալանավորված, սակայն դեպքից հետո ուշագրավ բացահայտումներ են արվել, եւ առաջիկայում այլ մեղադրյալների մասին հայտնի կդառնա:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ԼՈՒՐԵՐ

ՀԱՅՑԸ ԲԱՎԱՐԱՐՎԵԼ Է

Գլխավոր դատախազության պետական շահերի պաշտպանության վարչության հայցադիմումը 2024 թվականի սեպտեմբերի 4-ին Հակակոռուպցիոն դատարանի վճռով բավարարվել է, եւ Կոտայքի մարզի Աղավնաձոր բնակավայրին հարող՝ ընդհանուր 5000 քմ մակերեսով հողամասի նկատմամբ վերականգնվել է (ճանաչվել է) Հայաստանի Հանրապետության սեփականության իրավունքը: 2024 թվականի սեպտեմբերի 12-ին հողամասի նկատմամբ գրանցվել է ՀՀ սեփականության իրավունքը:

Դատարանի վճռով շուկայական արժեքին մոտարկված՝ ընդհանուր 9 մլն 388 հազար դրամ կադաստրային արժեքով, «հատուկ պահպանվող տարածք» նպատակային նշանակությամբ հողամասին տրվել է Կոտայքի մարզ, Ծաղկաձոր համայնք, գյուղ Աղավնաձոր, Աղավնու աղբյուր թաղամաս 26 հասցեն:

Ընդհանուր առմամբ, Կոտայքի մարզի համայնքների վարչական սահմաններից դուրս գտնվող անտառային ֆոնդի հողերի վերաբերյալ Գլխավոր դատախազության կողմից ներկայացվել է 14 քաղաքացիական հայց, որոնց շրջանակներում վիճարկվում են շուրջ 465 հազար 770 քմ մակերեսով հողամասերի աճուրդները: Հայցերից 8-ով կայացվել են վճիռներ՝ պետության օգտին. 4 վճիռ մտել է օրինական ուժի մեջ, գրանցվել է Հայաստանի Հանրապետության սեփականության իրավունքը՝ ընդհանուր 60 հազար 197 քմ մակերեսով հողամասի նկատմամբ:

«ԴՐԻՖԹ»՝ ԿԵՆՏՐՈՆՈՒՄ

Պարեկային ծառայությունը հետեւողական է դիտավորությամբ բնակչության անդորրը խանգարող, համակեցության կանոններն անտեսող, հասարակական կարգը կոպիտ կերպող խախտող անձանց հայտնաբերելու հարցում: Այս մասին հայտնում է ՆԳՆ-ն:

Նման հերթական մի դեպք գրանցվեց սեպտեմբերի 8-ին: Ժամը 22.30-ի սահմաններում ոստիկանության օպերատիվ կառավարման կենտրոն զանգահարած երկու քաղաքացիներ հայտնել են, որ Սախարովի արձանի մոտ «Մերսեդես» մակնիշի առանց խլացուցիչների հինգ մեքենաներ մրցավազք են կազմակերպել:

Պարեկային ծառայության Երեւանի գնդի ծառայողները անմիջապես ձեռնարկել են միջոցառումներ եւ պարզել, որ, այսպես ասած՝ դրիֆտին մասնակցել է վեց մեքենա՝ մեկ «Ֆորդ Մուստանգ» եւ հինգ «Մերսեդես»:

«Ֆորդ Մուստանգը» վարել է մայրաքաղաքի Բաբաջանյան փողոցի բնակիչ 32-ամյա տղամարդ, «Մերսեդեսներից» մեկը՝ Վանյան փողոցի բնակիչ 30-ամյա տղամարդը: Այժմ ճշտվում է մյուս չորս «Մերսեդեսները» վարած անձանց ինքնությունը:

Հիմնավորվել է, որ վերոհիշյալ վեց մեքենաների վարորդները, անտեսելով երթեւեկության մյուս մասնակիցներին, կոպիտ կերպով խախտելով հասարակական կարգը, ավտոմեքենաները տեւական ժամանակ վարել են դրիֆտ կատարելով, որի հետեւանքով խախտվել է հասարակական կարգը եւ բնակչության անդորրը: Կազմված փաստաթղթերն ուղարկվել են քննչական բաժին: Քրեական օրենսգրքի 297-րդ հոդվածի՝ խուլիգանության հատկանիշներով նախաձեռնվել է քրեական վարույթ:

● *Ըստ ոստիկանության տվյալների՝ սեպտեմբերի 12-ից 13-ը ՀՀ ՆԳՆ ոստիկանության ստորաբաժանումների կողմից բացահայտվել է հանցագործության 112 դեպք, որից 2-ը՝ նախկինում կատարված:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԶ

ԹՈՂԵԼ Է ՊԱՇՏՈՆԸ

Տավուշի մարզի դատախազի տեղակալ Վասիլ Սարգսյանը, ով Ներքին գործերի նախարար Վահե Ղազարյանի մորաքրոջ որդին է, սեպտեմբերի 11-ին դիմում է գրել, ազատվել աշխատանքից: Դատախազության մեր աղբյուրները հայտնում են, որ Վասիլ Սարգսյանը արձակուրդի դիմում է գրել, սակայն այդ դիմումը մերժելով՝ նրան ուղարկել են Արագածոտնի մարզի դատախազությունում աշխատելու: Վասիլ Սարգսյանը, հասկանալով վերադասի ակնարկը, դիմում է գրել ու ազատվել աշխատանքից: Վասիլ Սարգսյանը կիրթ, մասնագետ իրավաբան, մարդկային լավ որակներով օժտված, հարգված դատախազ էր, Իջևանում նրանց ընտանիքը մեծ հարգանք է վայելում:

ՎԵՃ՝ ԳՈՒՄԱՐԻ ՀԱՄԱՐ

Սահմանազատման անվան տակ, ապօրինի կեպով Կիրանց գյուղից Ադրբեջանին հանձնված տների, հողերի, այլ գույքի, ընդհանուր քանակով 58 անշարժ գույքի դիմաց գույքատերերին պետական բյուջեից դրամական փոխհատուցումը կատարվել է կառավարության գաղտնի որոշումով: Հայտնի չէ, թե ինչ սկզբունքով են որոշվել սեփականության իրավունքով, կադաստրից տրված վկայականներով հողերի, գույքի համար փոխհատուցման գումարների չափերը: Կիրանց գյուղից հայտնեցին, որ վագոն-տնակում բիզնես գործունեություն ծավալած անձին իբեւ փոխհատուցում 20 միլիոն դրամ են տվել, այդ անձը վագոն-տնակը տեղափոխել է գյուղի այլ տարածք, նույն բիզնեսով է զբաղվում: Կիրանցում տների, տարածքների համար միջինը 40-50 միլիոն դրամ են տվել: Կիրանցի մի բնակիչ ասաց,որ իր հողատարածքի համար սկզբում մոտ 2 միլիոն դրամ են առաջարկել, ինքը հրաժարվել է: Հետո Տավուշի մարզպետ, Նիկոլ Փաշինյանի դասընկեր, նրա հարսանիքի քավոր, Տավուշի մարզպետ Հայկ Ղալումյանը այդ բնակչին Տավուշի մարզպետարան է կանչել: Վերջինս մեզ պատմեց. «Մարզպետը կանչել է, գին է հարցրել, ես ասել եմ, որ վաճառքի տնամերձ հողամաս չունեմ, իսկ եթե պարտադրված պետք է ծախեմ, ապա՝20 միլիոն դրամ: Մարզպետն ասել ա՝ 5 միլիոն, չեմ համաձայնվել, ասել ա՝ 10, ես չեմ համաձայնվել, ասել ա՝16, ասել եմ՝չէ: Մի քանի օրից կանչել ա, ասել՝ես կապ չունեմ, վարչապետը որոշել ա ՝ 10, ես էլ չեմ վերցրել: Դիմել եմ վարչապետին, պատասխանել են, որ իրենք կապ չունեն, «ձեր մարզպետարանի իրավասության սահմաններում է տվյալ գործընթացը»»: Կիրանցի բնակիչը այդ հարցով նաեւ Հայաստանի մարդու իրավունքների պաշտպանին է դիմել, սպասում է ՄԻՊ-ի պատասխանին:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

ԵԼՈՒՅԹ՝ ՄԱԿ-Ի ԳԼԽԱՎՈՐ ԱՍԱՄԲԼԵԱՅԻ ՆՍՏԱՇՐՋԱՆԻՆ

ԳԼՈԲԱԼ ԱՆՎՏԱՆԳԱՅԻՆ ՀԱՐՑԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Վարչապետ Նիկոլ Փաշինյանը ելույթ է ունեցել ՄԱԿ Գլխավոր ասամբլեայի 79-րդ նստաշրջանի շրջանակներում կազմակերպվելիք Ապագայի գագաթնաժողովին ընդառաջ սեպտեմբերի 12-ին կազմակերպված գլոբալ արտավի ընթացքում, որն անցկացվել է առցանց: Այն նախաձեռնվել է Գերմանիայի կանցլեր Օլաֆ Շոլցի, Նամիբիայի նախագահ Նանգոլո Մբումբայի եւ ՄԱԿ Գլխավոր քարտուղար Անտոնիո Գուտերեշի կողմից:

Ինչպես տեղեկացրին ՀՀ վարչապետի աշխատակազմից, արշավին միացել են ավելի քան 4 տասնյակ պետությունների եւ կառավարությունների ղեկավարներ:

Իր ելույթում վարչապետը նշել է.
«Մեծարգո նախագահ Մբումբա,
Մեծարգո կանցլեր Շոլց,
Մեծարգո գլխավոր քարտուղար Գուտերեշ,
Տիկնայք եւ պարոնայք,
Ուրախ եմ այս բարձր մակարդակի միջոցառմանը ելույթով հանդես գալու հնարավորության համար եւ ներկայացնելու Հայաստանի ակնկալիքներն Ապագայի գագաթնաժողովից:

Ներկայումս, երբ աշխարհը բախվում է ծանր մարտահրավերների եւ բազմաթիվ ճգնաժամերի, Ապագայի գագաթնաժողովը կարեւոր հնարավորություն է տալիս խթանելու հավաքական ջանքերը՝ երաշխավորելու, որ բազմակողմ համակարգն ապահովում է խաղաղություն, արդարություն, բարգավաճում եւ հարգանք մարդու իրավունքների նկատմամբ:

Միջազգային զարգացումների ներկայիս տեմպերը ցույց են տալիս, որ մենք դեռեւս շարժվում ենք հակառակ ուղղությամբ, երբ ՄԱԿ-ը դեռ կարիք ունի կանխարգելման եւ հաշվետվողականության անհրաժեշտ գործիքների եւ մեխանիզմների՝ ընդդեմ միջազգային իրավունքի ոտնահարումների, հատկապես մարդու իրավունքների կոպտագույն խախտումների եւ ոճրագործությունների:

ՄԱԿ-ի Կանոնադրության եւ միջազգային իրավունքի հենքի վրա վերափոխված բազմակողմանիությունն է պատասխանը գլոբալ անվտանգության եւ զարգացման մարտահրավերներին՝ ի շահ ներկա եւ ապագա սերունդների՝ ապահովելու, որ բոլոր ձայները լսելի լինեն, եւ ոչ ոք հետեւում չմնա:

Այս տեսանկյունից, «Հանուն ապագայի» դաշնագիրը կարեւոր փաստաթուղթ է բազմակողմանիությանը նոր շունչ հաղորդելու համար, որի հիմքում պետք է լինի ՄԱԿ-ը:

Հայաստանն ակտիվորեն ներգրավված է եղել «Հանուն ապագայի» դաշնագրի բանակցություններում՝ մշակելու առաջադեմ եւ բովանդակալից գործողություններ՝ դեպի ավելի լավ, ավելի անվտանգ, ավելի խաղաղ եւ ներառական աշխարհի ճանապարհ հարթելու համար:

Մենք անհամբեր սպասում ենք Ապագայի գագաթնաժողովի քննարկումներին՝ հիմք ստեղծելու համաշխարհային կառավարման եւ միջազգային խաղաղության ճարտարապետության բարեփոխման, բնապահպանական արդարության ապահովման, տեխնոլոգիական անջրպետը կամրջելու եւ Միավորված ազգերի կազմակերպությանը կարող դարձնելու իր մանդատն իրականացնելու համար:

Մաղթում եմ բոլորիս հաջող Ապագայի գագաթնաժողով եւ անհամբերությամբ սպասում եմ մասնակցելու այդ առանցքային նախաձեռնությանը»:

ՆՈՐ ՄՈԴԵԼՆԵՐ՝ ԱՆԱՊԱՀՈՎՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ

Խորհրդարանն առաջին ընթերցմամբ քննարկել եւ ընդունել է «Սոցիալական աջակցության մասին» եւ «Պետական նպաստների մասին» օրենքներում փոփոխություններ եւ լրացումներ նախատեսող օրենսդրական նախաձեռնությունները: Առաջինից երկրորդ ընթերցում ընկած ժամանակահատվածում ՀՀ ԱԺ աշխատանքի եւ սոցիալական հարցերի մշտական հանձնաժողովը սեպտեմբերի 13-ին հրավիրել էր հանրային քննարկում հիշյալ նախագծերի լրամշակման նպատակով. այս նախագծերով կներդրվի ընտանիքի անապահովության գնահատման նոր համակարգը:

Քննարկմանը մասնակցել են ներկայացուցիչներ օրենսդիր եւ գործադիր մարմիններից, ոլորտով հետաքրքրված միջազգային եւ հասարակական կազմակերպություններից: Կարեւորելով շահագրգիռ՝ հասարակական կազմակերպությունների մասնակցությունը բարեփոխումներին վերաբերող ծրագրերին՝ հանձնաժողովի նախագահ Հերիքնազ Տիգրանյանը նշել է, որ նման ձեւաչափով քննարկումները կօգնեն դաշտի եւ օրենսդրական փոփոխությունների լավարկմանը: ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարի տեղակալ Աննա Ժամակոչյանը շնորհակալություն է հայտնել միջազգային եւ հասարակական կազմակերպություններին օրենսդրական բարեփոխումներն իրականացնելու ճանապարհին ցուցաբերած աջակցության համար: Խոսելով սոցիալական աջակցությանը վերաբերող օրենսդրական նախաձեռնության մասին՝ փոխնախարարը նշել է, որ նախաձեռնության նպատակն է բարձրացնել սոցիալական պաշտպանության եւ սոցիալական աջակցության ոլորտի դիմակայունությունը, փորձել լուծել արդյունավետ կառավարման եւ դերերի հստակեցման խնդիրները, ինչպես նաեւ առաջարկել, նոր դերակատարներ ծառայություններ»:

Մանրամասն ներկայացնելով օրենսդրական բարեփոխումները եւ տեղեկություններ նոր ներդրվող «անապահովության նպաստի» քաղաքականության մշակման վերաբերյալ՝ Աննա Ժամակոչյանը նշել է, որ անապահովության գնահատման գործընթացում նոր մոդելներ են որդեգրվել: Իրականացվելու է բոլոր եկամուտների հաշվառում, որը թույլ կտա ճիշտ գնահատել ընտանիքների իրական անապահովությունը: Աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարի տեղակալը պատասխանել է մասնակիցների հարցերին, դիտարկումներին, ներկայացրել պարզաբանումներ սոցիալական աջակցության բաղադրիչի, չափորոշիչների, անձնական տվյալների պաշտպանության վերաբերյալ: Մասնակիցները կարեւորել են նման ձեւաչափով քննարկումները, ողջունել առաջարկվող փոփոխությունները սոցիալական պաշտպանության ոլորտում՝ ընդգծելով, որ Կառավարության կողմից իրականացվող համալիր բարեփոխումներին զուգահեռ ոլորտում կարձանագրվեն զարգացում եւ առաջընթաց:

ԱԺ

● *Անցած 1 օրվա ընթացքում հանրապետությունում արձանագրվել է ճանապարհատրանսպորտային 20 պատահար, 3 մարդ զոհվել է, 17-ը՝ ստացել տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:*

ԼՈՒՐԵՐ

ԽԱՐԴԱԽՈՒԹՅՈՒՆ՝ ՇԻՆԱՆՅՈՒԹԻ ՈԼՈՐՏՈՒՄ

ՀՀ ՊԵԿ հետաքննության եւ օպերատիվ հետախուզության վարչությունը, տնտեսական հանցագործությունների դեմ պայքարի շրջանակում, օրերս բացահայտել է շուրջ 490 միլիոն դրամի ստվերային շրջանառություն:

Մասնավորապես, օպերատիվ տվյալներ էին ստացվել այն մասին, որ Երեւան քաղաքի Ռուբինյանց փողոցում գործող շինանյութի առեւտրով զբաղվող ընկերությունն, ապրանքներ վաճառելիս, չի տրամադրում ՀԴՄ կտրոն, ինչպես նաեւ դուրս չի գրում համապատասխան հարկային հաշիվներ, ինչի արդյունքում խուսափում է առանձնապես խոշոր չափի հարկեր վճարելուց:

Ինչպես տեղեկանում ենք ՊԵԿ-ից, ստացված օպերատիվ տվյալները հաստատվել են: Մասնավորապես, փաստական տվյալներ են ձեռք բերվել այն մասին, որ 2022-2024 թվականների ընթացքում ընկերության կողմից թաքցվել է շուրջ 490 միլիոն դրամի իրացման շրջանառություն:

Ձեռք բերված փաստական տվյալների հիմքով՝ կատարվել է պետությանը պատճառված վնասի նախնական հաշվարկ, ըստ որի՝ պետությանը պատճառվել է շուրջ 155 միլիոն ՀՀ դրամի վնաս: Դեպքի առթիվ հաղորդում է ներկայացվել ՀՀ քննչական կոմիտեի տնտեսական հանցագործությունների եւ մաքսանենգությունների քննության գլխավոր վարչություն, որտեղ նախաձեռնվել է քրեական վարույթ: Վարույթի շրջանակում կատարվել են խուզարկություններ, առգրավվել քրեական վարույթի համար կարեւոր նշանակություն ունեցող փաստաթղթեր, համակարգիչներ եւ էլեկտրոնային կրիչներ:

NYMEX. ԹԱՆԿԱՐԺԵՔ ՄԵՏԱՂՆԵՐԻ ԳՆԵՐՆ ԱՃԵԼ ԵՆ

NYMEX բորսայի սեպտեմբերի 12-ի առեւտրային նստաշրջանի արդյունքում սահմանվել են ոսկու, արծաթի եւ պլատինի հետեւյալ գները.

Ոսկու գինն աճել է 2.05%-ով եւ կազմել 2596.00 դոլար, արծաթի գինն աճել է 4.34%-ով եւ կազմել 30.29 դոլար, իսկ պլատինի գինն աճել է 2.87%-ով եւ կազմել 990.00 դոլար:

Չափման միավորը 1 տրոյական ունցիան է (31.1 գրամ):

Նյու Յորքի NYME.-ն (New York Merchantile Exchange) ամերիկայն ֆյուչերսային բորսա է, որն առեւտուրը շարունակվում է երկու բորսայական միավորներով՝ NYMEX-ի՝ նավթի, գազի, պլատինի, պալադիումի, էթանոլի, ածխի, էլեկտրաէներգիայի եւ ածխածնի երկօքսիդի արտանետումների եւ COMEX-ի ոսկու, արծաթի, պղինձի, ալյումինի ուղղություններով:

ԷԿՈՆՈՄԻԿԱ

ԶԲՈՍԱՇՐՋԱՅԻՆ ՆԵՐԴՐՄԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ

ՄԱԿ զբոսաշրջության համաշխարհային կազմակերպության կողմից ստեղծված Հայաստանի զբոսաշրջային ներդրումային ուղեցույցը վստահելի ուղեկից կդառնա պոտենցիալ ներդրողների համար:

Այս մասին ուղեցույցի շնորհանդեսին ասաց ՀՀ էկոնոմիկայի նախարար Գեւորգ Պապոյանը:

Նա նշեց, որ Հայաստանի զբոսաշրջային ներդրումային ուղեցույցը ուղղված է զբոսաշրջության եւ տնտեսության հարակից ոլորտներում ներդրումային դաշտի, իրավական կարգավորումների, վերջին տարիներին գրանցված զարգացումների եւ ձեռքբերումների, ներդրումային ծրագրերի ու հնարավորությունների, զբոսաշրջային ներուժի, թիրախային ուղղությունների եւ այլ առնչվող հարցերի ներկայացմանը:

Պապոյանն ընդգծեց՝ այսօր ուղեցույցն առավել քան արդիական է, քանի որ 2024 թվականի սեպտեմբերի 1-ից ուժի մեջ է մտել «Զբոսաշրջության մասին» նոր օրենքը, որով նախատեսվում է կարգավորել քաղաքացիների սպառողական իրավունքների պաշտպանությանը, զբոսաշրջային գործունեության ծառայություններին եւ սուբյեկտերին ներկայացվող պահանջների հստակեցմանը, համայնքներում զբոսաշրջության զարգացմանը, համաչափ տարածքային տնտեսական զարգացմանը եւ մարդկային ռեսուրսների զարգացմանն ուղղված հարցերը:

«Միաժամանակ, վերջնականացման փուլում է գտնվում նաեւ Հայաստանի զբոսաշրջության զարգացման հնգամյա ռազմավարությունը, որով հստակ սահմանվում են առաջիկա տարիների տեսլականն ու զբոսաշրջության զարգացմանն ուղղված քայլերը, այդ թվում՝ առաջնահերթ զարգացման ենթակա եւ ներդրումներ պահանջող ոլորտների նախանշմամբ: Եվ այսօր Զբոսաշրջային ներդրումային ուղեցույցը եւս համալրում է այս ցանկը»,-նշեց Պապոյանը:

Նա վստահեցրեց՝ այն վստահելի ուղեկից կդառնա պոտենցիալ ներդրողների համար՝ միաժամանակ նպաստելով ինչպես մեր երկրի՝ միջազգային կապիտալի համար գրավիչ եւ զբոսաշրջային ներդրումների համար հեռանկարային ուղղության դիրքավորմանը, այնպես էլ մեր բազմաթիվ նոր նախաձեռնությունների ու ծրագրերի ի կատար ածմանը:

ՄԱԿ-ի Զբոսաշրջության համաշխարհային կազմակերպության գլխավոր քարտուղար Զուրաբ Պոլոլիկաշվիլին ընդգծելով ոլորտի կարեւորությունը Հայաստանի համար, նշեց, որ երկիրը դեռ շատ անելիքներ ունի: Նրա խոսքով՝ Հայաստանում շատ են ներդրումները եւ վստահ է, որ առաջիկայում ուղեցուցի շնորհիվ դրանք էլ ավելի կշատանան:

«Սա արդեն երկրորդ ներդրումային ուղեցույցն է Եվրոպայում, մենք նման ուղեցույցներ պատրաստում ենք զարգացող երկրների համար, որոնք օտարերկրյա ներդրողների կարիք ունեն: Վարչապետի հետ հանդիպման ընթացքում հասկացա, թե ինչպես է նա երկրում սատարում զբոսաշրջության ոլորտին, նրա ներկայությունը ազդակ է ցանկացած ներդրողի համար այն իմաստով, որ յուրաքանչյուրը, ով կցանկանա Հայաստանում ներդրումներ իրականացնել, կստանա պետության ղեկավարի անմիջական աջակցությունը»,-նշեց Պոլոլիկաշվիլին:

Ուղեցույցը մշակվել է ՄԱԿ զբոսաշրջության համաշխարհային կազմակերպության եւ ՀՀ էկոնոմիկայի նախարարության Զբոսաշրջության կոմիտեի համագործակցությամբ:

Ա. Ս.

Fastex

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊՐԵՄԻԵՐ ԼԻԳԱՅԻ ՏԻՏՂՈՍԱՅԻՆ ՀՈՎԱՆԱՎՈՐ

Fastex-ը ստանձնել է ֆուտբոլի Հայաստանի Պրեմիեր լիգայի տիտղոսային հովանավորի դերը: Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիայի հետ ձեռք բերված նոր համագործակցության շրջանակում առաջիկա երեք ֆուտբոլային մրցաշրջանների ընթացքում Հայաստանի առաջնությունը կրելու է «Fastex Պրեմիեր լիգա» անվանումը: «Fastex Պրեմիեր լիգայի» 2024/25 մրցաշրջանին մասնակցում է 11 ակումբ, որոնք վիճարկում են Հայաստանի չեմպիոնի կոչումը:

Հիշեցնենք, որ նախկինում եւս Fastex-ը հանդիսացել է Հայաստանի Պրեմիեր լիգայի տիտղոսային հովանավորը՝ մշտապես աջակցելով հայկական ակումբային ֆուտբոլին:

Fastex-ի համահիմնադիր Վիգեն Բադալյանը նշել է. « ՀՖՖ-ի հետ մեր համագործակցությունը շարունակական է:Մեր համատեղ ջանքերը կնպաստեն հայկական ֆուտբոլի կայուն զարգացմանը՝ ակումբներին ընձեռելով նոր հնարավորություններ»:

ՀՖՖ նախագահ Արմեն Մելիքբեկյանը նշել է. «Ուրախ ենք, որ կրկին համագործակցելու ենք Fastex-ի հետ: Վստահ ենք, որ միասին կարող ենք նպաստել Հայաստանի Պրեմիեր Լիգայի առաջընթացին»:

Fastex-ի աջակցությունը հայկական ֆուտբոլին եւ սպորտային աշխարհի կարեւոր իրադարձություններին կլինեն շարունակական:

Fastex-ի մասին

Fastex-ն արագ զարգացող Web3 էկոհամակարգ է, որն իր օգտատերերին տալիս է հսկայական հնարավորություններ եւ հարմարավետ միջավայր՝ առաջարկելով Fastex Exchange փոխանակման հարթակը, Fastex Card-ը, Fastex Wallet-ը եւ ftNFT-ն՝ իր հարթակներով եւ ֆիջիթալ սփեյսներով: Fastex-ը կարեւորում է անվտանգ եւ հուսալի միջավայրի ապահովումը համաշխարհային թվային ֆինանսների զարգացող աշխարհում՝ մշտապես հետեւելով ոլորտի միտումներին:

«Ժողովուրդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ՄՇԱԿՈՒՅԹ

ԴԱՍԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ ՀԱՅ ԱՐՎԵՍՏԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՀԱՅԿԱԿԱՆ ԳՈՐԳԵՐԸ՝ ՄՈՍԿՎԱՅԻ ԹԱՆԳԱՐԱՆՈՒՄ

Մոսկվայի հայկական թանգարանում հայկական մշակույթին նվիրված միջոցառումների շրջանակներում տեղի է ունեցել դասախոսություն՝ «Հայկական գորգեր. միստիկ իմաստներ եւ զարդանախշեր» թեմայով:

Նախաձեռնությունը նպատակ էր հետապնդում լսարանին ներկայացնել հայկական գորգագործության՝ որպես արվեստի ուրույն ճյուղի զարգացման նախապատմությունը: Պատմաբան, մշակութային շարժումների հետազոտող Լիլիանա Նիկողոսյանի խոսքով՝ գորգերը հայկական միջավայրում ստեղծվեցին այն ժամանակ, երբ կենցաղում զգացվում էր դրանց կարիքը՝ կենսապայմաններով պայմանավորված: «Բայց կարճ ժամանակում գորգագործությունը հայերի կողմից կատարելագործվեց: Պետք է նշել, որ դրանք արվեստի գործեր էին, որոնք ստացվում էին բավականին բարդ գործընթացի արդյունքում: Գույները ստացվում էին բացառապես բնական ճանապարհով. դեղինը ստանում էին քրքմածաղկից, շագանակագույնը՝ ընկույզի, իսկ սեւը՝ նռան կեղեւից: Որպես հումք՝ օգտագործվում էր ոչխարի, հաճախ նաեւ այծի եւ ուղտի բուրդը: Առանձին տեղ ուներ որդան կարմիրը, որն աշխարհին հայտնի դարձավ հենց հայերի շնորհիվ, եւ որին առավել մանրամասն անդրադարձել է Հերոդոտոսը իր՝ հայ ժողովրդի մասին աշխատության մեջ»,-նշեց պատմաբանը՝ ընդգծելով, որ գիտնականները հետազոտությունների արդյունքում եկան այն եզրակացության, որ գորգի ամենավաղ նմուշը, որ գտնվել է Ալթայում եւ թվագրվում է մ.թ.ա. 5-րդ դարով, ստեղծվել է հայկական լեռնաշխարհում: Նիկողոսյանն անդրադարձավ նաեւ հին հայկական գորգերի վրա տեղ գտած խորհրդանիշներին: Նա նշեց, որ դրանցից յուրաքանչյուրը մի իմաստ է արտահայտել, եւ հաճախ գորգերի վրա մասնագետները գորգագործի ասելիքն են կարդում: «Գորգի գործվածքից հասկացվում էր՝ այն տղամարդու, թե կնոջ համար է գործված: 10-13-րդ դարերում գորգերն արտադրվել են բացառապես հայերի կողմից եւ արտահանվել Կիլիկյան Հայաստանից Եվրոպա: Այդ մասին հավաստի հիշատակումներ ունի Մարկո Պոլոն: Եվ եթե տարածաշրջան եկած այլ ազգեր հիմա ներկայանում են իրենցը համարվող գորգերով, դրանք հայկական զարդանախշեր են պարունակում եւ գիտնականները տվել են նաեւ այդ հարցի պատասխանը. հայերը նրանց տուրք էին տալիս հենց գորգերի տեսքով»,-ընդհանրացրեց բանախոսը:

Հ. Բ.

«ՄԵԴԱԼԻ ՀԱԿԱՌԱԿ ԿՈՂՄԸ»

«Մեդալի հակառակ կողմը» գեղարվեստական կինոնկարը լայն լսարանին է ներկայացնում անվանի ծանրոդ, աշխարհի եւ Եվրոպայի կրկնակի չեմպիոն Նազիկ Ավդալյանի կյանքի եւ՝ վերելքները, եւ՝ վայրէջքները, բացահայտում էջեր, որոնց հնարավոր է՝ անգամ Ավդալյանի մտերիմները ծանոթ չեն:

Ավտովթարի հետեւանքով լուրջ վնասվածք ստանալով՝ Նազիկ Ավդալյանը յոթ տարի դուրս է մնում մեծ սպորտից, հետո վերադառնում եւ, չնայած շրջապատի անվստահությանը, մարմնական անմարդկային ցավերին, դառնում է Եվրոպայի կրկնակի չեմպիոն՝ ապացուցելով՝ եթե կան կամք եւ աննկուն ոգի, անհնար ոչինչ չկա:

Ֆիլմի պրեմիերան տեղի ունեցավ սեպտեմբերի 12-ին Կարեն Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիրում:

Ցուցադրությունից առաջ կինոնկարի գլխավոր պրոդյուսեր, ռեժիսոր եւ սցենարի հեղինակ Աննա Մաքսիմը, որ նաեւ մարմնավորում է Նազիկ Ավդալյանին, ասաց՝ պատմությունը բարձրացնում է հարցեր, տալիս է որոշ պատասխաններ: «Ի՞նչ եմ ես ուզում, ի՞նչն է ինձ խանգարում դա անել, ինչքանո՞վ է իմ ցանկությունը կարեւոր նաեւ Հայաստանի համար: Ըստ իս՝ Նազիկ Ավդալյանը պատասխանել է այդ հարցերին»,-շեշտեց Աննա Մաքսիմը:

Նա խոստովանեց՝ շատ բան է դրել խաղատախտակին, որ այդ գաղափարները տարածվեն, եւ լինի արվեստի, մտքի եւ հոգու հեղափոխություն:

Դերասանուհին միշտ համարձակ է եւ փորձում է առաջնորդվել Նիցշեի խոսքերով. «Եթե սկսել ես, չպետք է կասկածես»: Նա շատ է մարզվել, որպեսզի կարողանա հասնել արդյունքի եւ հավատացնել, որ իրական մարզիկ է: «Գյումրիում նկարահանումների ժամանակ պետք է ցատկեի 75 սմ շարժվող ծանրաքարի վրա: Այդ ժամանակ Աստծուն խնդրեցի, որ ծունկս չջարդեմ, եւ նկարահանումները կանգ չառնեն»,-պատմեց Աննա Մաքսիմը:

Նազիկ Ավդալյանը անկեղծորեն նշեց՝ շատ հուզված է: «Երբ կողքից ես նայում կյանքիդ, տեսնում դերասանների, որոնք ներկայացնում են այն ամենն, ինչի միջով անցել ես, տարբերություն տեսնում ես, բայց կարեւորը գաղափարն է: Շատ ուրախ կլինեմ, որ իմ անցած ճանապարհով կարողանամ օգտակար լինել որեւէ մեկին»,-ասաց մարզիկը:

Ավդալյանին մի քանի անգամ առաջարկել են իր մասին ֆիլմ նկարահանել, սակայն չի համաձայնել: Աննա Մաքսիմին ընդառաջել է, քանի որ նրա պատկերացումները ֆիլմի շուրջ շատ լուրջ են եղել: «Իրականում մտածում էի, որ շատ դժվարություններ կլինեն: Աննային ասացի՝ ծանրաձողը բարձրացնելը, տեխնիկային տիրապետելը հեշտ չէ: Պարապմունքների ընթացքում Աննային ասում էի՝ գուցե դադարեցնի մարզումները, ֆիլմը չնկարահանվի, սակայն Աննան շատ ուժեղ մարդ է եւ չհանձնվեց»,-շեշտեց Նազիկ Ավդալյանը եւ խոստովանեց՝ հոգու խորքում միշտ էլ ցանկացել է, որ իր մասին գեղարվեստական կինոնկար ստեղծվի, քանի որ այդպես իր պատմությունն ավելի հասանելի կլինի հանրությանը:

Կինոնկարում ներկայացվում են Ավդալյանի սիրո պատմությունը, ամուսնությունն ու հիասթափությունները: Չեմպիոնը փորձել է երբեք չհանրայնացնել իր անձնական կյանքի մանրամասները, քանի որ իր խնդիրները, կյանքի գեղեցիկ պահերը միայն իրենն է համարում: «Այն, ինչ կա կինոնկարում, չափազանց անձնական է, նույնիսկ ամենամտերիմ մարդկանց շատ բան չեմ պատմել, սակայն անհնար էր անկեղծ կինոնկար ստեղծել առանց անձնական կյանքին վերաբերող հատվածների»,-հավաստիացրեց ծանրորդը:

Կինոնկարում Նազիկ Ավդալյանի մարզչի՝ Արտաշես Ներսիսյանի դերը կերտել է ՀՀ վաստակավոր արտիստ Արտաշես Ալեքսանյանը: Նա հրաշալի ցույց է տալիս այն մեծ դերակատարումը, որ ունեցել է մարզիչը Ավդալյանի կայացման, հաղթանակների գործում: Ալեքսանյանը կարծում է՝ եթե բժիշկը ֆիզիկապես է բուժում, մարզիչը՝ հոգեպես: Ըստ դերասանի՝ մարզիչը պետք է կարողանա խաղալ մարզիկի հոգու նուրբ լարերի հետ եւ նեցուկ կանգնի նրան յուրաքանչյուր բարդ վիճակից հանելու համար:

«Մենք գիտենք, որ արվեստը զոհեր է պահանջում, ուստի ամեն զոհ տվեցինք նման ֆիլմ ստանալու համար: Մենք դեռ չենք գիտակցում, թե ինչ լեգենդի հետ գործ ունենք: Նազիկ Ավդալյանը կարող է օրինակ լինել թե՛ երեխաների, թե՛ դպրոցականների, թե՛ սպորտսմենների համար: Ֆիլմում խոսվում է մարդկային զգացմունքների, հույզերի, ապրումների, սիրո մասին: Եթե մեծ սեր չլինի, չես կարողանա հասնել այն ամենին, ինչին ձգտում ես»-ընդգծեց դերասանը:

ՄԱՐԶԱԿԱՆ

ԽՃՈՒՂԱՅԻՆ ՀԵԾԱՆՎԱՎԱԶՔԻՆ ԸՆԴԱՌԱՋ

Հանրապետությունում հեծանվային սպորտի եւ առողջ ապրելակերպի մասսայականացման, դպրոցականների շրջանում ֆիզկուլտուրայի եւ սպորտի քարոզչության ապահովման նպատակով սեպտեմբերի 28-29-ը Գեղարքունիքի մարզի Շողակաթ համայնքի 20 կմ ճանապարհահատվածում կանցկացվի «ՀՀ վարչապետի գավաթ» խճուղային հեծանվավազքի սիրողական մրցաշարը:

Այս մասին հաղորդագրություն է տարածել ՀՀ ԿԳՄՍ նախարարությունը:

Մրցաշարի կազմակերպման եւ դպրոցականների կողմից նախապատրաստական աշխատանքների իրականացման նպատակով սեպտեմբերի 6-ից սկսվել է հեծանիվների մատակարարումը ՀՀ մարզերի եւ Երեւան քաղաքի միջնակարգ, ավագ դպրոցներին եւ վարժարաններին: Սեպտեմբերի 11-ի դրությամբ հեծանիվները բաշխվել են Արմավիրի (198 հատ), Արագածոտնի (168 հատ), Կոտայքի (138 հատ), Վայոց ձորի (68 հատ) եւ Գեղարքունիքի (194 հատ) մարզերի հանրակրթական ուսումնական հաստատություններին:

Հեծանիվների մատակարարման եւ բաշխման գործընթացը ՀՀ մյուս մարզերում շարունակվում է:

Մրցաշարն անցկացվում է ՀՀ հանրակրթական ուսումնական հաստատությունների 10-12-րդ դասարանների աշակերտներից կազմված հավաքական թիմերի միջեւ:

Մրցաշարի 1-ին փուլին, որը կանցկացվի սեպտեմբերի 20-25-ը, կարող են մասնակցել ՀՀ մարզերի եւ Երեւան քաղաքի միջնակարգ, ավագ դպրոցների եւ վարժարանների թիմերը, իսկ 2-րդ՝ եզրափակիչ փուլին՝ 1-ին փուլում 1-3-րդ տեղերը գրաված դպրոցների կամ վարժարանների հավաքական թիմերը (թիմի կազմում՝ 1 տղա, 1 աղջիկ):

Սեպտեմբերի 28-ին մասնակիցները պետք է մրցավայր ներկայանան դպրոցին տրամադրված հեծանիվներով: Յուրաքանչյուր մասնակից պարտավոր է մեկնարկին (start) եւ վերջնարկին (finish) տեխնիկական զննում իրականացնող հանձնաժողովին ներկայացնել իր հեծանիվը:

Եզրափակիչ փուլին 1-ին, 2-րդ եւ 3-րդ տեղեր գրաված դպրոցների թիմերը եւ մասնակիցները կպարգեւատրվեն ԿԳՄՍՆ համապատասխան կարգի հավաստագրերով, գավաթով, մեդալներով եւ դրամական պարգեւներով: 1-ին տեղ գրաված դպրոցը կպարգեւատրվի 4,000,000 ՀՀ դրամով, 2-րդ տեղը՝ 2,500,000 ՀՀ դրամով, 3-րդ տեղը՝ 1,500,000 ՀՀ դրամով:

Կպարգեւատրվեն նաեւ դպրոցի ֆիզկուլտուրայի ուսուցիչները՝ 1-ին տեղ՝ 700,000 ՀՀ դրամ, 2-րդ տեղ՝ 500,000 ՀՀ դրամ եւ 3-րդ տեղ 300,000 ՀՀ դրամ: Հեծանվավազքի հաղթող թիմերի աշակերտները եւս կպարգեւատրվեն դրամական մրցանակներով. 1-ին տեղ՝ 2 մասնակից՝ 150,000-ական ՀՀ դրամ, 2-րդ տեղ՝ 2 մասնակից՝ 100,000-ական ՀՀ դրամ, 3-րդ տեղ՝ 2 մասնակից՝ 75,000-ական դրամ (հարկերը, տուրքերը եւ պարտադիր վճարները ներառված չեն):

● *Սեպտեմբերի 15-ին՝ 19:30-ին, Երեւանի պետական կամերային թատրոնում կբեմադրվի «Ինչ տարբերություն թե ում հետ» ներկայացումը: Տոմսերի արժեքը՝ 3.000-8.000 դրամ:*

ԵՂԵ՛Ք ? ՏԵՂԵԿԱԾՎԱԾ

ԿԱՐԳ

ՀԱՐՑ. Ո՞րն է համարվում ՀՀ մշտական բնակության ժամանող ֆիզիկական անձանց անձնական օգտագործման գույք: Ուզում եմ իմանալ՝ կա արդյոք այդ գույքը անձի սեփականությունը լինելու որոշակի ժամանակահատվածի պահանջ:

Մկրտիչ Կիրակոսյան (37 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Մ. Կիրակոսյանի հարցին ի պատասխան՝ տեղեկացնում ենք, որ «Մաքսային կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի դրույթներով՝ ՀՀ մշտական բնակության ժամանող ֆիզիկական անձանց անձնական օգտագործման գույք՝ ֆիզիկական անձի անձնական գործածության օգտագործված իրերը, անձնական օգտագործման մեկ ավտոմեքենան եւ տնային օգտագործված գույքը, որոնք չունեն գործարանային փաթեթավորում ու պիտակավորում եւ ֆիզիկական անձի կողմից ձեռք են բերվել նախքան ՀՀ ժամանելը: Ընդ որում, անձնական օգտագործման ավտոմեքենան պետք է նախքան ՀՀ ներմուծվելը՝ վերջին անգամ հաշվառումից հանվելուց առաջ, առնվազն 6 ամիս հաշվառված լինի ՀՀ մշտական բնակության ժամանող ֆիզիկական անձի անունով այն երկրում, որտեղ ՀՀ մշտական բնակության ժամանող անձը վերջին անգամ մշտապես բնակվել է նախքան ՀՀ-ում որպես մշտական բնակիչ հաշվառվելը:

Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտե

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Նշենք, որ «Մաքսային կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 250-րդ հոդվածի դրույթներով՝ սահմանված ժամկետը խախտելու դեպքում Միության անդամ երկրների ռեզիդենտ ֆիզիկական անձինք կրում են այնպիսի պարտավորություններ, որոնք սահմանված են Միության եւ ՀՀ օրենսդրությամբ ավտոմեքենան ՀՀ ներքին սպառման նպատակով ներմուծելու համար:

Էջը՝ ԱԼՎԱՐԴ ԿՈՇԿԱԿԱՐՅԱՆԻ

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՐՑ. Կնքել եմ վարկային պայմանագիր, որից բխող պարտավորությունների ապահովման համար գրավադրել եմ իմ գույքը: Վճարումները չկատարելու կամ ժամանակին չկատարելու դեպքում ի՞նչ հետեւանքներ կարող են լինել:

Իրինա Մելքոնյան (39 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Վարկի մարման եւ տոկոսների վճարման պարտականությունը չկատարելու կամ ժամանակին չկատարելու դեպքում վարկը դասակարգվում է՝ դառնալով ժամկետանց, որի դիմաց հաշվարկվում են պայմանագրով նախատեսված տույժեր: Պայմանագրում տույժերի վերաբերյալ դրույթներ նախատեսված չլինելու դեպքում տոկոսները հաշվարկվում են կետանցի (ուշացման) օրվանից մինչեւ պարտավորության դադարման օրը՝ ըստ համապատասխան ժամանակահատվածների համար ՀՀ կենտրոնական բանկի սահմանված բանկային տոկոսի հաշվարկային դրույքների:

Եթե իրացման արդյունքում ավելացել է գումար, ապա ֆինանսական կազմակերպությունը պետք է վերադարձնի Ձեզ այդ գումարը, իսկ եթե ստացված գումարը բավարար չէ վարկային պարտավորություններն ամբողջությամբ մարելու համար, ապա Դուք պատասխանատու եք վարկային պայմանագրից բխող պարտավորությունների համար Ձեզ պատկանող մնացած գույքով: Միայն գրավատուն հանձնված գույքի գրավի դեպքում է, որ գույքի իրացումից հետո գրավատունն իրավունք չունի որեւէ պահանջ ներկայացնել պարտապանի նկատմամբ, եթե անգամ գրավ դրված գույքի իրացումից ստացված գումարն անբավարար է պահանջը լրիվ բավարարելու համար (ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 255 հոդվածի 7-րդ կետ):

Ֆինանսական համակարգի հաշտարար

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Եթե վարկային պայմանագրի շրջանակներում առկա է գրավադրված գույք, ապա ֆինանսական կազմակերպությունը կարող է իրացնել գրավի առարկան եւ իրացման արդյունքում ստացված գումարը ուղղել վարկային պարտավորությունների կատարմանը:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը՝ համացանցից

Երեւանի պետական համալսարանում տեղի ունեցավ նոր ուսումնական տարվա մեկնարկին եւ առաջին կուրսեցիների ընդունելությանը նվիրված «Հնարավորությունների տոնավաճառ» միջոցառումը, որի ընթացքում ԵՊՀ արտաուսումնական ստորաբաժանումներն առաջին կուրսեցիներին պատմեցին իրենց գործունեության եւ իրականացվող ծրագրերի մասին:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ 52-5301

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ _____

Հեռ.՝(060) 490049
0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ա.

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Շիրակ	+8 + 11 +24 + 29
Կոտայքի լեռներ	+8 + 11 +25 + 29
Կոտայքի նախալեռներ	+16 + 18 +29 + 30
Գեղարքունիք	+9 + 11 +23 + 28
Լոռի	+9 + 14 +23 + 27
Տավուշ	+12+ 17 +27 + 30
Արագածոտնի լեռներ	+9 + 12 +23 + 27
Արագածոտնի նախալեռներ	+15+ 18 +27 + 31

Արարատ	+17 + 20 +33 + 35
Արմավիր	+15 + 18 +33 + 35
Վայոց ձորի լեռներ	+ 9 + 11 +25 + 27
Վայոց ձորի նախալեռներ	+17 + 20 +32 + 35
Սյունիքի հովիտներ	+17 + 21 +33 + 35
Սյունիքի նախալեռներ	+14 + 17 +29 + 32
ԼՂՀ	+13 + 16 +27 + 31
Երեւան	+24 + 26 +30 + 32

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **13.9.2024**
Տպաքանակ՝ 3968
Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ.Հակոբյանի 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*